Պարույր Սևակ

Իմ ժողովրդին

Զարմանքով եմ ես միշտ նայում քո անցյալին,
Քո անցյալին և՛ տանջալից, և՛ պանծալի:
Ինչպե՞ս ես դու կտրել այդքան երկար ճամփա,
Երբ նա՝ խճոտ, ու երկինքդ է եղել ամպած:
Ինչպե՞ս ես դու, մեղվի նման, անգամ թույնից
Նեկտար քաղել, մեղրը քամել դառնությունից՝
Պանդխտության քո կսկիծը դարձրել «Կռունկ»
Եվ «Հորովել» դարձրել վերքդ, ցավրդ խորունկ:
Երբ հեղեղներն անց են կացել հոխորտալով,
Ինչպե՞ս ես դու քո աղբյուրի մի բահ ջրով
Միշտ շեն պահել ջրաղացը ձորի խորքում,
Նոր կյանք տվել ծեծված արտին, ջարդված այգուն:
Հազար անգամ դու ընկնելով՝ ինչպե՞ս ելար,
Ո՞նց ապրեցիր՝ հազար անգամ երբ դու մեռար:
Ի՞նչ հրաշքով չմարեցիր, ինչպես նրանք,
Որ մե՛ծ էին, հրդե՛հ էին, իսկ դու՝ կրա՛կ:
Բայց գիշերվա մթության մեջ ահազարհուր
Դու այնպիսի կրակ էիր, այնպիսի հուր,
Որ վառվում էր պաղած քարին գրակալի,
Շինականի ցուրտ հյուղակին կրակ տալիս.
Որ վառվում էր քո դուստրերի մութ աչքերում,

Արյուն դառնում որդիներիդ երակներում.
Որ օջախ էր, խաղաղ կյանքում խաղաղ օջախ՝
Թոնրի կրակ, ծխանի ծուխ, կերոն ու ջահ,
Բայց վրեժի ահեղ բոց էր ահեղ մարտում
Եվ հրախաղ, որ հաղթանակ էր ավետում...
Եվ չի մարել նա դարերում մահամնա,
Մնացել է, որովհետև մի հուր էր նա,
Որ չի մարում օտար հողմից, այլ արծարծվում,
Եվ ավերիչ հրդեհի պես չի տարածվում...

14.XI.1950թ.
Երևան